

ՀԱՐԻՐԻ ԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒՐՈՒՄԸ ՆԵՊԻՆՉ ՊԵՐՐԻԻ

Երէկ գիշեր, Մածտալիունի «Հարիրի գերդաստանի մշակութային կեդրոն»-ին մէջ տեղի ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերիի մեծարանքի հանդիսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան վարչապետ Ռաֆայէլ Հարիրի, խորհրդարանի նախկին նախագահ Օմար Քարամէ, Լիբանանի Առաջին Տիկին Անտրէ Լահուտ, նախարարներ, երեսփոխաններ, ինչպէս նաեւ պետական եւ բարձրաստիճանի բազմաթիւ պաշտօնատարներ: Խօսք առաւ մեծարեալը, որ արծարծեց Ուազպիի Հարցը եւ անոր նկատմամբ Լիբանանի անգիջող կեցուածքը: Ապա խօսք առաւ նաեւ վարչապետ Հարիրի, որ գրուածովէ ետք Պրերիի քաղաքական կշիռը այս երկրին մէջ, ձայնակցեցաւ անոր՝ Ուազպիի Հարցով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

●Սիջակարգ դասարաններու աշակերտներու համար (բազի ֆրանսէզի): Դիմել հեռ. 03 - 919788:

●Բոլոր կարգերու եւ բոլոր դասարաններու՝ անգլերէնով: Հեռաձայնել՝ 03 - 732665 թիւին:

ՔԱՎԱՆԱՅՎԱԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Որախոսութեամբ կ'ուզենք յայտնել մեր սիրելի ժողովուրդին, թէ յառաջիկայ Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002ին, Ա. Նշան Մայր եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ քահանայապետ ձեռնադրութիւն եւ օծում, դպրեկանցի շրջանաւարտները՝

ԲԱՐԵՃ. ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Ա. Պատարագը պիտի մատուցէ, ձեռնադրութիւնը պիտի կատարէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶՆԵԱՆ Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին

Սկիզբ Ա. Պատարագի ժամը 9:00ին Զեռնարութիւն՝ ժամը 10:00ին

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար եւ խորհրդակի արարողութեան, քաջակերելու եւ գօտեպնդելու երիտասարդ ընծայեալը: Կոչման արարողութիւնը պիտի կատարուի Զաբաթ, 21 Սեպտեմբեր 2002, կտուր ետք ժամը 5:00ին, Ա. Նշան Մայր եկեղեցոյ մէջ: Ընծայեալը պիտի միանայ Լիբանանի թեմին քահանայից դասուն, ծառայելով ձիւնկի Ա. Յարութիւն եկեղեցոյ ծխական շրջանին ներս:

ԴՐԻՄԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՇԻԼ իրարօգնութեան սնտուկը ուրախ եւ յատարաբեր, թէ իր հասոյթն հիմնած է կրթական ֆոնտ մը:

ԱՅՇԻԼ կրթական ֆոնտն կրնան օգտուիլ հայ համալսարանականներ (Ա. տարիէն սկսեալ) եւ հայկական վարժարան յաճախող նախկին արարածի աշակերտներ:

Դիմումագիրները պիտի տրամադրուին Սեպտեմբեր 25էն Նոյեմբեր 10, 2002, ԱՅՇԻԼ գրասենեակէն, ԱՅՇԻԼ շէնք, Բ. յարկ, առաւօտեան ժամը 8:30էն կտուր ետք ժամը 4:30:

Արդ, ԱՅՇԻԼ իրարօգնութեան սնտուկը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր իր անդամներուն, որոնք առաջին օրէն ներկայ կանգնեցան եւ հաստատեցին անոր առաքելութեան:

Իրարքանցիկ հայ, որ ապահովագրուած է ԱՅՇԻԼի մօտ, բնականաբար իր ներդրումը կը բերէ վերոյիշեալ կրթական ֆոնտին:

ԱԶԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հեռ. 01/261622 - 03/268640

Ա.— 2002—2003 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին 2 Սեպտեմբեր 2002էն սկսեալ, կէսօրէի առաջ ժամը 8:30էն 12:00, Երկուշաբթիէն՝ Ուրբաթ:

Բ.— Վերաքննութիւններու եւ մուտքի քննութեանը թուականներն են. Երեքշաբթի, 24/9/2002ին՝ արաբերէն լեզու Գործընթացի, 25/9/2002ին՝ հայերէն լեզու Դիմումագրի, 26/9/2002ին՝ ֆրանսերէն լեզու եւ թուրքարեանը:

Գ.— Նորեկ աշակերտներէն կը պահանջուին վերականգնող, ինքնութեան թուղթի լուսապատճէն, երկու լուսանկար, բարի վարուց վկայագիր, աշակերտին պետական թիւը՝ վաւերացուած:

Դ.— Կ'ընդունուին 1 տարեկան եօթը մասնականէն սկսեալ մասնակները:

Ե.— Վերամուտի նախատեսուած թուականներն են. Զորքաբարձի, 2 Հոկտեմբեր 2002ին՝ նախկին թարգմանի, 3 Հոկտեմբեր 2002ին՝ մասնակարտէն:

Զ.— 2002/2003 կրթական տարեշրջանի վարժարանի կրթաթոշակի սակերը մատչելի են եւ սերտուած:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել քարտուղարութեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՈՒԱԶՁԱՆԻ ԿԱՐԳՈՒՄԸ ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն ժողովի կարեւորութիւնը եւ հաստատեց, որ անկէկա շրջանում տայ արաբերէնի արաբական կարեւոր ժողով պիտի ըլլայ, որովհետեւ յատկապէս զայն մը պիտի ուղղէ խաղաղասիրտութեան եւ երկխօսութեան կարեւորութեան մասին:

ՊԵՐՐԻԻ ՕՍՏ

Այնչիւրիքի մէջ, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերիի հետ տեսակցելէ ետք Մորաբիտու քաւ, որ ան ներկայացուցած է շուրիքի գծով Լիբանանի կեցուածքը, որ միջազգային օրէնքը յարգելով՝ անկէկա կը մնայ իր օրինակուն իրաւունքը հանդիսացող բաժինին գծով:

Խորհրդարանի նախագահը, եւ անկէ առաջ՝ վարչապետ Ռաֆայէլ Հարիրի, յոյս յայտնեցին, որ այս հարցը կը լուծուի խաղաղ միջոցներով եւ մենք այլ նոյնը կը մտադրենք, ուստի յառաջիկայ շաբաթներուն կապի մէջ պիտի մնանք, որովհետեւ կարծեմ, թէ խորհրդարանի նախագահ Պրերի Փարիզ պիտի այցելէ, քսաւ Մորաբիտու:

Մորաբիտու քաւ, որ նաեւ քննարկած են պաղեստինեան իրավիճակը եւ Պրերի ներկայացուցած է նախկին նախագահ Պրերի Փարիզ պիտի այցելէ, քսաւ Մորաբիտու:

Մորաբիտու վարչապետ Հարիրիի հետ նոյնպէս քննարկեց շրջանային իրավիճակը, պաղեստինեան բեւեւ պարագայները եւ շուրիքի հարցը, ապա յայտարարեց, որ Լիբանան իր այցելուութեան նպատակը այս մարզերուն շուրջ իրարայն խաղաղութեան մասին խորհրդածողովի մը

ՀԱՐԻՐԻ ԵՏՏ

Մորաբիտու վարչապետ Հարիրիի հետ նոյնպէս քննարկեց շրջանային իրավիճակը, պաղեստինեան բեւեւ պարագայները եւ շուրիքի հարցը, ապա յայտարարեց, որ Լիբանան իր այցելուութեան նպատակը այս մարզերուն շուրջ իրարայն խաղաղութեան մասին խորհրդածողովի մը

Մորաբիտու վարչապետ Հարիրիի հետ նոյնպէս քննարկեց շրջանային իրավիճակը, պաղեստինեան բեւեւ պարագայները եւ շուրիքի հարցը, ապա յայտարարեց, որ Լիբանան իր այցելուութեան նպատակը այս մարզերուն շուրջ իրարայն խաղաղութեան մասին խորհրդածողովի մը

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱԻՎԱԲԵՐ ԼՐԱՏՈՒԹԻՒՆ ԱՍ. ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ԳԱՆՇԱՏԱԿԱՆ

CHARITY NAVIGATOR՝ Հ.Բ.Ը.Ս.ը աւելի բարձր կը դատ քան Ամերիկեան Կարմիր Խաչը, Հարվըտ համալսարանը, Փրկեց Երեւանը Հաստատութիւնը, եւ գայն կը գնահատէ չորս աստղանի:

ARMENIAN NEWS NETWORK/ GROONG կը տեղեկացնէ.

Նի Եորքի բարեգործական կազմակերպութիւններու հսկիչ մարմին՝ CHARITY NAVIGATOR հաստատութիւնը, Հ.Բ.Ը.Ս.ը կը դատ աւելի բարձր, քան Ամերիկեան Կարմիր Խաչը, Հարվըտ համալսարանը, Փրկեց Երեւանը Հաստատութիւնը, անոր շնորհիւ չորս աստղի տիրուող իր կարճ տարողութեամբ ընթացիկ ծախսերու գործընթակիչ եւ երկար ժամկետային գործընթակիչ հաստատուում ձեռնարկեցին համար եւ աւելի բարձր աստղանակ հազար հարիւր բարեգործական կազմակերպութիւններու տուրքերու թրջածարմերը համեմատական քննարկումի ենթարկելէ ետք, ամերիկեան մամուլը կը յանձնէ ուշագոյն լրատուութիւն մը, որ այն արձագանգ կը գտնէ, նոյնիսկ բարեգործական կազմակերպութիւններու աշխարհը ցնցելու աստիճանով չափանշելով զինք՝ բաղադրուելու եւ արժեւորելու համար այդ միութիւններու տնտեսական դրութիւնը:

Արդարեւ՝ TRENT STAMP համացանցային կայքի տնօրէնը կը վկայէ, թէ Հ.Բ.Ը.Ս.ի տնտեսական չորս աստղի դասակարգումը ցոյց կու տայ, թէ այդ միութիւնը կը գերազանց ընդհանուր հիմնադրութեան ու արժեքները՝ քան այլ կազմակերպութիւններ:

Հ.Բ.Ը.Ս.ը, կը պատ, սքանչելի աշխատանք կը տանի, վստահեցնելով, որ նուիրատուներուն ամեն մէկ տղարը կը ծախսուի ամենամեծ պատասխանատուութեամբ:

Աճ կը շարունակուի. Հ.Բ.Ը.Ս.ը իմաստուն ընկերութիւն մըն է գիտակից նուիրատուներու համար:

ՀԱՐԱՍՆԵԿԱՆ ՀՐԱՄԵՐ

ՏԻԿԻՆ ԿԻԼԵՆ ԱՐԱՍԱԼԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԴՐՕՃԱԿԻՐԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՄԱՐԱԼԻ Ա. ՊԱՍԿԻ ԽՈՐԻՈՐԴԻՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

Աճ կը շարունակուի. Հ.Բ.Ը.Ս.ը իմաստուն ընկերութիւն մըն է գիտակից նուիրատուներու համար:

ՀԱՐԱՍՆԵԿԱՆ ՀՐԱՄԵՐ

ՏԻԿԻՆ ԿԻԼԵՆ ԱՐԱՍԱԼԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԴՐՕՃԱԿԻՐԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

Աճ կը շարունակուի. Հ.Բ.Ը.Ս.ը իմաստուն ընկերութիւն մըն է գիտակից նուիրատուներու համար:

ՀԱՐԱՍՆԵԿԱՆ ՀՐԱՄԵՐ

ՏԻԿԻՆ ԿԻԼԵՆ ԱՐԱՍԱԼԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԴՐՕՃԱԿԻՐԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՄԱՐԱԼԻ Ա. ՊԱՍԿԻ ԽՈՐԻՈՐԴԻՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

Աճ կը շարունակուի. Հ.Բ.Ը.Ս.ը իմաստուն ընկերութիւն մըն է գիտակից նուիրատուներու համար:

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

Աճ կը շարունակուի. Հ.Բ.Ը.Ս.ը իմաստուն ընկերութիւն մըն է գիտակից նուիրատուներու համար:

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

Աճ կը շարունակուի. Հ.Բ.Ը.Ս.ը իմաստուն ընկերութիւն մըն է գիտակից նուիրատուներու համար:

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ՎԿԵՆԱՐԿ

ՎԱՐ ՅՈՅՍԵՐՈՎ՝ ԴԵՊԻ ԿԱՅՈՅ ԱՊԱԳԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՍՅԱՆ ՈՒՍԵՆԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Որքան դժուար է ազգի մը համար անկախութեան տիրանալը, նոյնքան դժուար է ուսանելի ճիգ կ'ենթարթէ ձեռքբերուած այդ անկախութիւնը արժեւորելու եւ հայրենիքը օրէօր բարգաւաճ դարձնելու ոչ այդքան դիւրին պետական գործընթացը:

Մեր՝ հայերու պարագան այդպիսին է ամենեւին: Այսօր ազգովին հպարտութեամբ եւ ուրախութեամբ կը տօնենք մեր հայրենիքի վերանկախացման տասնամեակը, բայց չենք բաւարարուիր արձանագրուած յաջողութիւններով, եւ բացթողումները նկատի ունենալով՝ կը փորձենք սրբազան թերիւններն ու անպայմանօրէն կը ձգտինք յաւազուելու, բարգաւաճման խոչախոյն:

Յետադարձ ակնարկ մը տանամէկ տարիներուն վրայ բաւարար է հաստատելու, որ կա տակաւին տակաւին բացթողումներ բոլոր մարզերուն պարագային, բայց ամենէն աւելի տնտեսական - քնկերային բնագաւառին մէջ, որուն ցարդ անկախութիւնը իրավիճակը հիմնական պատճառը կը դառնայ ամենէն վտանգաւոր ու մահացու երեւոյթի մը արտագաղթին, ինչպէս նաեւ հայուն անյարիր՝ քնկերային պայմանային յոռի երեւոյթներն ու նկարագիրներն ու դրսեւորման ու յառաջացման:

Այս բոլորը ի վերջոյ պիտի սրբագործին հարկաւ, սակայն որքան շուտ այնքան լաւ: Առայդ, այս իմաստով հայրենի պետութիւնը կրկնապատիկ պարտաւորութիւն ունի անշուշտ եւ բոլորին աչքերը յարած են անոր վրայ. միայն պետութիւնը, աւելի ճիշդ՝ իշխանութիւնները կրնան համազգային այս յուրջ խնդիրը լուծել. մնացեալ փորձերը, Սփիւռքի օժանդակութիւնները մէկ մասնիկը կրնան կիպ մըլ ընդհանուր աշխատանքին, սակայն միայն ու միայն պետական մակարդակի վրայ կրնան լուծուիլ այսպիսի հիմնահարցեր:

Այս բոլորին դիմաց, դրական երեւոյթներ, որոնց վրայէն լուռ անցնիլը անարդար պիտի ըլլայ:

Յաջողութիւններ արձանագրուեցան արտաքին քաղաքականութեան մէջ, յաջողութիւններ արձանագրուեցան պաշտպանութեան մարզին մէջ, ինչպէս նաեւ՝ Հայրենիք - Սփիւռք անշրջանցելի կապերուն մէջ:

Արտաքին քաղաքականութեան մէջ, հայրենի իշխանութիւնները ի վերջոյ յաւակօրէն ճշդեցին Հայկական Յեղափոխութեան քաղաքական արժեքն ու դիրքը՝ ՄԱԿի ամպիոնէն արժարժեղով պայն: Նաեւ ճշդուեցան մեր հայրենիքի անվտանգութեան սպառնացող թոշրքի մէջ՝ Արցախի մասին, ինչպէս նաեւ բարեկամ Թուրքիոյ, Իրանի ու այլոց հետ յարաբերութեանց եղանակն ու սահմանը, անոնց նկատմամբ յստակ դիրքորոշումը: Իսկ Լեւոնային Ղարաբաղի տը ֆաբրոս միացումը Հայաստանի՝ յաւազնու կը բացայայտէ հայրենի իշխանութեան հոգատար յստակ կեցուածքը անոր հանդէպ:

Պաշտպանութեան մարզին մէջ թերեւս ամենէն աւելի յաջողութիւններ կ'արձանագրուին: Այսօր ունինք կազմակերպուած, ամբալուռ ու կովկասեան չափանիշներով հզօր բանակ: Կա՞յ աւելի գօտեպնդող ու յուսադրող տունեայ քան այս երեւոյթը:

Ինչ կը վերաբերի Հայրենիք - Սփիւռք կապերուն, թէեւ տակաւին հսկայական աշխատանքներ կան կատարելիք, սակայն մեծամասամբ շրջանցած ենք ամենէն կարեւոր օտարերկրացի - տեղացի բարդոյթը, չկալ զրեւցի կամ բնիկ տրամադրութիւն, այլ կալ՝ ԱՅ: Փաստօրէն սփիւռքահայ գործարարներն թիւը հետզհետէ կը բազմապատկուի հայրենիքի տարածքին, հայրենիք հաստատուող հայ երիտասարդներն որոշ թիւ մը կայ, վրջէնք կրնար անտեսել ու չողջունել, քաջ գիտնալով միաժամանակ, որ բաւարար չէ անշուշտ (մասնաւոր կ'արձանագրուին նախաձեռնութիւններ են ցարդ եւ անոնց կը պակսի համազգային ծրագրուած ու կազմակերպուած բնոյթը) եւ անպայման որ կ'ակնկալենք շատ աւելին:

Բայց դրական այս երեւոյթները կարգաւորելով եւ արժապնեղով է, որ հետզհետէ պիտի չքանան վերջնական յոռի յոռի բարքերն ու երեւոյթները: Ի վերջոյ արդար ըլլանք եւ բնորոշիք, որ տարտարի ոչինչ է նորանկախ պետութեան մը համար եւ կրկին չէ մոզական գաւազանի մէկ հարուածով այսքան կարճ ժամանակամիջոցի ընթացքին շրջանցել ծով հարցերն ու գերինդիւնները:

Կը մնայ, որ հայրենի իշխանութիւնները տնտեսական մարզի բարեկարգման ճամբով կապեցնեն արտագաղթը, ամրապնդեն օրինական - արդարադատական համակարգի կայացումը եւ մասնաւոր ամբողջովին վերացնեն կաշառակերութեան դատապարտելի երեւոյթը, որուն դէմ արդէն ձեռնարկուած են յայնմօր արշաւը:

Կը մնայ նաեւ, որ հայուն անկտրում կամքով ու համոզումով, ազգովին, պետութիւն - ժողովուրդ մէկ բռնուցք դարձած՝ շարունակեալ կերպով հայուն վայելի հայրենիքը՝ հզօր բնակով, կարգաւոր, բարգաւաճ տնտեսութեամբ, արհեստագիտական բարձր կարողութիւններով օժտուած (որուն բոլոր նախադրելիքները ունինք ու փաստը տուած ենք համաշխարհային առումով): Հայրենիք մը, որ քանակաւորոր դարձու արդի ու քաղաքակրթութեամբ մարդու հասկացողութեամբ ըլլայ բարգաւաճ, ուր հանգրուան արհագրուան հաստատուելի աշխարհագրի հայերը եւ սեփական հողի վրայ փաստեւ իրենց բազմակողմանի կարողութիւնները՝ մշակութային, գիտական, մարզական եւ այլն: Վերջապէս հայրենիք մը, որ անուր-ու հաստատ կորիկը դառնայ Ամբողջական Հայաստանի անկորնչելի տեսլականին:

ՀՐԱՉ ՎԱՐ



Գրական Հե

ԴԱԺԱՆ, ԲԱՅՅ ՔԱՂՅՐ...

Սերերունց սերը, անտարակոյս, հողին սերն է: Հողածին մարդը, որ ի սկզբանե կը դատապարտուի հողին վերադառնալու անխուսափելի ցավատագիրին, արտակարգ սիրոյ մը անփշրելի շղթայով իր գոյութիւնը կը կապէ մայր հողին՝ Հայրենիքին, անոր գոյութեամբ պայմանաւորելով նոյնիսկ իր ժամանակաւոր ներկայութեան իմաստը: Այս մտածումը կը դառնայ բացարձակ նշմարաբեկ, մա՛նաւանդ երբ հայրենիքներու գոյութիւնը փորձաքարի կը զարնուի եւ ժողովուրդներ հոգեպէս կ'ալեկոծին վտանգը: Ինչպէս որ հողատարածքներ ի գին ամէն գոհողութեանց պաշտպանելու նկատմամբ փոքր կուտանքով: Նման պարագաներուն, հայրենիքը կը խորտակէ գրիք կաշկանդող ամէն կաղապար ու սահման, կը դառնայ մայր ու սիրունի, կեանքի աղբիւր եւ գոյութեան իմաստ, գերագոյն սեր եւ առաջին ու վերջին բանաստեղծութիւն, որուն անդիմադրելի թելադրանքներուն ու պատգամներուն անմար կրակէն ոգեշնչուող բանաստեղծները միշտ ալ կը փառերգեն այս եզակի հարստութիւնը՝ Հայրենիք անուն սրբութիւնը:

Փոքր ժողովուրդներուն համար գրեթէ անխուսափելի դարձած այս իրողութիւնը հայ ժողովուրդին համար եղած է իր նակատագրի հետ նոյնացած գոյութեան կանոնները: Հայկ նահապետի ծառայման հետ ազգային աւանդութիւն ու հանգամանկ դարձած ծանօթ հատարմամբ իրենց ոտքի հանած է հայ գիրի սպասարկուներու իրերայաջորդ սերունդները: Հայաստան աշխարհի չորս ծագերուն քառասունչորս եւ անլի անգամներ փաստը: Լած վերոնշյալ նշմարելի նշմարտութիւնը վերջին տարիներուն յատուկ շեշտ ու բովանդակութիւն ստացաւ մա՛նաւանդ արցախահայ բանաստեղծներու գրչին տակ: «Արցախ, իմ դաժան սեր» ապրումը ալ անլի ուժգնութեամբ վարակեց Մովսէս Խորենացիի, Կիրակոս

Գանձակեցիի, Մխիթար Գօշի, Մուրացանի եւ այլանուն մեծութիւններու կտակին ժառանգորդ արցախահայ բանաստեղծները, որոնք իրենց միայն խօսքով, այլեւ՝ գեներով ու արիւնով, եւ վառողի ու արեան ներքինութեան բարձրացող նախաձեռնումներով յաջողեցան անլի եւ անլի վերածնել քարին ու հողին, աղբիւրին ու ծառին, հացին ու աստղին սրբաձայն շշուկները եւ զանոնք հոգեբարձի թափանցիկ ու թելադրական վարակիչ բանաստեղծութիւններով:

Չանգազան հրատարակութեանց առիթով կրկնուած այս համոզումը մեզի համար անվիճելի նշմարտութեան կրկնակ ուժ ստացաւ վերջերս, երբ սկսանք թափանցել «Արցախ - դաժան սեր» խորագրեալ ժողովածուին ոլորտներէն ներս: Արցախահայ 49 բանաստեղծի եւ արձակագրի բնորոշ գործերէն հարուստ փունջ մը կ'արձայնուած այս հատման իր գրեթէ բոլոր էջերուն, գրեթէ բոլոր բանաստեղծներուն եւ նոյնիսկ արձակագիրներուն բառերուն մէջ մի տառին մէջ կեանքի ու կենցարք ներկայութիւն է Ղարաբաղը, ոչ միայն իբրեւ սուկական հող ու քար, այլեւ մա՛նաւանդ իբր ոգի եւ աւանդ, ուխտ ու կտակ: Կարն խօսքով՝ որպէս գերագոյն հարստութիւն է «կեանքից էլ թանկ» սրբութիւն: Սրբութիւն՝ որուն խորհուրդները իրերայաջորդ սերունդներու ներկայացուցիչներու մօտ կերպարանք ստացած են քերթողական տարբեր գոյներով ու ձայնալարերով, բայց միշտ ալ նոյն հաւատքով, նոյն նուիրումով եւ միեւնոյն հաւատարմութեամբ:

«Արցախ - դաժան սեր» ժողովածուէն քաղուած քովի ներկայացուցչական չափածոները լուսագոյն վկաներն են այս դաժան, բայց քաղցր սիրոյն, որ առիւնը ու անդիմադրելի է ըստ ամենայնի...

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ


ԳՐՉՈՎ ՈՒ ԶԷՆՔՈՎ

Ինչպէս գիտենք, Արցախեան գոյամարտը նախ եւ առաջ սկսուեց գաղափարական ճակատում: Այստեղ, բնականաբար, առաջին գծի գիւղերը գրողներն ու լրագրողներն էին: Ղարաբաղում՝ որպէս տանտէրեր, իրենց հրաշալի զբօսաշրջութիւնը նրանք: Մեր գրողներն ու լրագրողները ստիպուած էին ստեր փչել ռատիոյով, հեռուստատեսութեանը ու կամուրջով, ապա՝ Մոսկովայի «Ժամանակ» հեռուստահաղորդման դէմ, որտեղից ամէն օր միտումնաւոր կերպով ճնշումներ էին գործադրում Ղարաբաղի եւ, ընդհանրապէս, հայ մտաւորականութեան վրայ՝ անուանելով նրանց ծայրայեղականներ: Այս ծանր օրերին Ղարաբաղի գրական իրակտը մենակ էին: Աշխարհով մէկ հնչեցին Անտրէյ Սախարովի, Միխայիլ Դուրիւնի, Վալենտին Օսկոցկու, Եւգեն Կիւրի, Ի. Բուրկովայի, Կիմ Բակլի, Յ. Պասկալեանի, Սիլվիա Կապուսիկեանի, Ջորի Բալայեանի, Բագրատ Ուլուբաբեանի, Սերո Խանգաղեանի, Բոգդան Չանեանի, Վարդգէս Պետրոսեանի, Սերգէյ Սարիեանի, Սեդակ Արզումանեանի, Հայկ Խաչատրեանի, Ջօրայր Խաչատրեանի, Թորոս Թորոսեանի, Տաւան Տէր Յովհաննիսեան, Հրաչեայ Յովհաննիսեանի, Գէորգ Էմիլի, Վահագն Դաւթեանի, Եւրբ Սահակեանի, Ալ-

վարդ Պետրոսեանի, Բակուր Կարապետեանի, Գէորգ Դեւրիկեանի եւ շատ ուրիշներ ձայնբեր: Արցախեան հիմնախնդրի հարցը թուրքերը, իրենց սովորութեան համաձայն, փորձեցին ծածկել ծխածածկոյթով՝ քողարկելով սուտն ու կեղծիքը: Սակայն, դա նրանց չփրկեց, քանի որ հայ մտաւորականներին իրենց հեղինակաւոր ձայնը միացրին ռուս նշանաւոր գիտնականները, գրողներն ու լրագրողները: Ազդեցիւններին ոչինչ չէր մնում անել, քան Ղարաբաղին հարիւր հազար հայերին վախեցընել վերջոյ, խօսակուռից նրանք անցան քարին, ապա սկսեցին ջարդեր կազմակերպել հայերի դէմ Սոււզայի շրջանում, որ նրանք Ղարաբաղի հետ կորցրին նաեւ եթէ չըլնան, որը փաստօրէն պատմական Արցախն է՝ իր դարաւոր վանքերով, Մուրացանի, Վաղարշապատի, Վաղարշապատի, Լէոյի՝ եւ շատ ուրիշ հայ երեւելիների ծննդավայր Շուշին՝ հայոց արւեստի ու արհեստների անկրկնելի օրրանը: Այսօր արդէն մեր սեղանի

ՀՐ. ԲԵԳԼԱՐԵԱՆ

(Հատուած)



Այստեղ քարերն էլ հասցէ են ու գիր. եւ ձայններն են ծորում արիւնից, եւ քայլը սիրոյ նշան է հողին, եւ աչքում տուն կայ՝ ո՛նց կապուի կոպը, եւ լեռը երկնին պարպուած բռունցք է:

Ճամբայ է կտրում աչքը վերստին. եւ մանաւանջ է հողը սրբապան, եւ ընդհուրում է օրը տաք ափից, եւ ամէն մկան լարուած ձայն է, եւ չի վրիպում նիպակը հայկի:

Չանգը հնչում է հաւքի թելերում, եւ վառքը լեռան յանջին է իջնում, եւ ծաղկի շուրջը բացում են դաշտեր, եւ խորքերով է արմատը երդում, եւ գունարում են անունս յոյսին:

Աղբիւր Սերոբի ձեռքն է իմ ուսին, եւ խորհուրդն իրեն սրբագործում է եւ ձին ֆիդայու՝ ֆիդայու երգն է, եւ քարը պահի ակից հանում է, եւ հողի ձայն է կարում արմատով:

ԱՐՅԱԽԱՇՈՒՆՉ ԵՐԳԵՐ

«Հայոց Արեւելից աշխարհ»-ի Արցախի բանաստեղծներուն ամբողջական պատկերը չէ հետագայ տողերով հրատարակուած փունջը: Արցախի դարաւոր կաղնիներուն զօրութեամբ բարձրուող լուսնու հաւատքին եւ անկտրում կամքին թարգմանն են այս բանաստեղծութիւնները՝ մշտաբորբոք սիրոյ, ոգիի վեհութեան, դարաւոր տառապանքի, բայց եւ մաքառման ու սիրանքի յանդիմանական պոռթկումներ, որոնք իրենց ընդհանրական ապրումներուն շնորհիւ կը յաջողին ամբողջական պատկեր մը փոխանցել ընդհանուրին մասին:

ՀՈԳԵԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Ես իմ անունն եմ հանում մոխիրից, Որպէս փշրուած գմբէթի բեկոր, Հոգուս պատերին պարկուղ դիւր իմ Լցում, ուշու՛ն էլ տեղին խաւարով:

Մոռացութեան սեւ փրփուր կայ պահուած Դեղին բնապղի քղանցքների տակ, Ես՝ յիշողութեան խորան աւերուած Ու հոգեդարձման լուսէ ակնթա՛րթ,-

Մահուան պարապից ձեռքերս հանում, Որպէս արարման ազդանշաններ, Խորում եմ հողի եռքի մէջ անհուն:

Ես հոգեդարձման լուսէ ակնթա՛րթ. Խաւար՛ն եմ ցրում թելերիս շեղբով Դեղին բնապղի քղանցքների տակ:

ՌՈԳԵՐԹ ԵՍԱՅԵԱՆ

ՔԱՄՈՒ ՍԱՐԱՀԱՐԹԻՅ

Ինքնամփոփ լեռան կանաչ գոգի մէջ Երկինքը իջել՝ վերքն է լուսնում, - Խաբկանքի ծուէն մեղր է ոսկեփայլ, ըմպում եմ, ինչպէս անպատի գայլ:

Եւ գետը՝ նեղիլի ու ինքնասածի, լեռան ոտքերը տրորում խորի - ձգնում է հանել ընդերք - բառերն այն, որ ընծայում են ժամանակ ու վայր -

Նրա՛նց, որ չունեն եղեգան փողեր, չունեն Աստուծոյ գիր ու վարդեր վառման, ամուր փարուս են մեր տաք գիշերուան եւ թունդ անիծում լուսաբացների:

Իսկ երկինքը լուռ, երկինքը տխուր - վերքը լուսացած բարձրանում է վեր, արեան մէկական կաթիլ դառնում է դէմքիս եւ լեռան կանաչ գոգի մէջ:

ՀՐԱՆԿ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՆ ԼԵՆԻՆԵՐԸ ՄԵՐ

Եղբայրներ են լեռները մեր՝ Լեռները մեր կախարդական, Միշտ եղել են դարեր ի վեր Իրար թիկունք ու օգնական:

Եղբայրներ են լեռները մեր՝ Լեռները մեր Արցախական, Բոչարի են պարում, տեսէ՛ք Նուագի տակ սուրբ հայկական:

Եղբայրներ են լեռները մեր՝ Հսկաները մեր մշտաբորբոք, Նրանցով են քաղերը մեր Յաղթանակներ տանում մարտուն:

Եղբայրներ են լեռները մեր՝ Հին ու ահել, բայց միշտ քահել, Նրանք են մեզ հայրենիքում Հայավարի ու հայ պահել:

Եղբայրներ են լեռները մեր՝ Լեռները մեր՝ վեհ, դիւթական, Մեզ տանում են դէպի դարեր իրենց ձայնաւ յանդիմանական:

ՆԱՐԵԿԱ ԱՍՐԵԱՆ

ԱՐՅԱԽ

... եւ քո աչքերում ծիծաղն ինքն իրեն հարքում է կարծես, եւ նայում օրից մէջ քամին դառնում է որբի արտասուք: Ամայութեան մէջ Քրիստոսն՝ ինքը Ելնում է ասես հաւատարմի խաչը օրինելու համար...

... եւ ինքնութիւնը մարմին է առնում լոյսի փերուս, եւ պահը ինքնին դեղնում է ասես բիբերում հասկի, քո յայտնութիւնը սրբագործելու պորտութեամբ անեղծ յանում է ոգիի երկրից երկինք... Եւ կատարեալ է խոհուն, ինքնամփոփ կրկնութիւնը քո, եւ տուայտանքի պանգրի հառաչ ժամանակի մէջ, ամէն մի խորհուրդ ինքնամաքումն անոր բռնկումով տանում է դէպի անըմրանելի...

ՍԵՆՈՐ ՀԱՍՐԱԹԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂ

Այստեղ ամէն քար Քարէ մատենն է, Քարէ պատմութիւն, Որ գրել են մեր Խելօք պատգամը, Գրել են մուրճով, Գրել են բրնձով, Որ չգան տանեն, Որ չգան այրեն Բարբարոսները: Եւ գրերը մեր

Դարեր են ապրել, Ապրել են մանուած Քերծերի վրայ, Կամարների մէջ Մեր կամուրջների, Եւ աղբիւրների Յուշաքարերին Եւ մեռնողների Շիրմաքարերին, Եւ լեզուի վրայ Մեր մանուկների...

ՀՐԱԶԵԱՅ ԲԵԳԼԱՐԵԱՆ

ԱՐՅԱԽ

1. Որպէս լեռն է մեր պայծառ տեսիլ հապար ձին, Այնպէս նոր չեն մեզ համար ցաւ ու դառնութիւն... Գ. ՏԵՐԵԱՆ

Մի պղտորիք քո հոգին այս դաւի առաջ, Մոմ է եղել քո ուղին՝ մթան մէջ վառած:

Քո վշտերի ձորերը շատ են խորացել, Բայց հապարտ են լեռներդ ու չեն կորացել:

Քար են դրել թելերիդ՝ թռչնաբազկի, Դու շտկել ես ինքը քեզ որպէս առասպել:

Ճիշտը բանտել են կրծքում, ցաւը դարձրել քար, Ամարասից Սուրբ Յակոբ, մինչև Գանձասար:

Հոգոցներ են բարձրանում քարերիդ տակից՝ Օրհնում ուղիդ՝ Յիսուսի խաչին բախտակից:

Մեր կոռուկը հառաչի մեր ձիւն է տանում, Որ փակել են շարունակ դաւի պնտանում:

Մեկնիք, մայր իմ, ձեռքերդ քո պատանդ որդուն, Յաւր հեզնում են այստեղ, հաւատը՝ մորթում...

1.

1. Որպէս լեռն է մեր պայծառ տեսիլ հապար ձին, Այնպէս նոր չեն մեզ համար ցաւ ու դառնութիւն... Գ. ՏԵՐԵԱՆ

2.

Ուրարտական ծառից է արմատը ծել, Մասիսի պէս չեն կարող Մոռով խլել:

Դեռ աշխարհին բաց կ'անեն դու դատը հայի, Դատի առաջ կը նստեն ցեղերն ամայի:

Կը հուրիարան մոմերդ, խաւարը կ'անցնի, Եւ կը փրկուեն վանքերդ աւերող կացնից:

ՎԱՂԱՐՇԱԿ ԳԱՐԻԲԵԼԵԱՆ

ՍԵՆՈՐ ՀԱՍՐԱԹԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՂՆԵՐՈՒ ՈՒՂԵՑՈՅՑ - ԿԱՅՔ



Հայաստան այցելող զբոսաշրջիկներ կրնան մեծապես օգտուել www.armeniainfo.am կայքին մէջ տեղադրուած տեղեկութիւններէն եւ «կայք»երէն:

Կայքը տեղեկութիւններ կը պարունակէ Հայաստանի տեսարժան վայրերուն, թանգարաններուն, ցուցարահներուն, շուկաներուն, մարզադաշտերուն, թատրոններուն, շարժապատկերի եւ համերգներու սրահներուն եւ անոնցմէ իւրաքանչիւրին նորութիւններուն մասին:

Այսպէս, օրինակ, կարելի է ստուգել, թէ տուեալ շարժուան ընթացքին Հայաստանի շարժապատկերի սրահները ի՞նչ ժապաւէններ կը ցուցադրեն, թատերական ի՞նչ ներկայացումներ կը կատարուին եւ այլն:

Յատուկ բաժին տրամադրուած է Երեւանի մէջ եւ Երեւանէն դուրս կեցողութեամբ հետաքրքրուողներուն: Այսպիսով կարելի է տեղեկութիւններ ստանալ պանդոկներու, ինչպէս նաեւ վարձու յարկարժեքներու մասին:

Առանձին բաժին մը յատկացուած է նաեւ Հայաստանի հայկական թէ միջազգային խոհանոցներու մասնագէտ ճաշարաններու եւ ֆասթ ֆուտի կեդրոններու մասին:

«Ի՞նչ ընել» բաժինով ներկայացուած են Հայաստանի մէջ ժամանցի գանազան կարելիութիւնները: Նաեւ կ'ընկերակցուի, ձեռնարկուի, լող, որսորդութիւն «փարակայտին» եւ այլն:

«Ուրիշ» գնել» բաժինով կարելի է ծանօթանալ Հայաստանի մէջ գիրքեր, օտար թերթեր, գորգեր եւ այլ գնումներ կատարելու համար յանձնարարելի խանութներու:

Կայքին մէջ տեղադրուած են նաեւ փոխադրութեան, ինքնուրուի - քաֆէներու, նամակատուներու, ֆաքսի եւ «Տի. Էյ. Էյ.»-ի գրութիւններու մասին տեղեկութիւններ, ինչպէս նաեւ Հայաստանի դեպքանատուներու եւ Հայաստանի մէջ այլ երկիրներու դեպքանատուներու «կայք»եր:

Կարելի է ըսել, որ կայքը իր համապարփակ մտնցումով յաջողած է ընդհանուր պատկեր մը տալ զբոսաշրջիկին, սակայն կարգ մը յանգումներ կրնան գայն աւելի ամրոզական դարձնել:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԿԸ ԽՃՈՂԵՆ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Համացանցի զարգացման հետ հասակ նետած սերունդը այժմ առանց անոր չի կրնար ապրիլ, եզրակացուց վերջերս Միացեալ Նահանգներու մէջ այս մասին հարցախոյզ կատարած ընկերութիւն մը:

Այս կեդրոնին համաձայն, այսօրուան ուսանողներուն 86 առ հարիւրը կ'օգտագործէ համացանցը եւ անոր կը վստահի համալսարանական իր կեանքին աւանդուող հարցերուն դասաւորման համար:

Առնենք ուսումնասիրութիւններու օրինակը. ընկերութեան համաձայն, ուսանողներուն երեք քառորդը համացանցը կը գործածէ գիրքերէ աւելի, մինչ գրադարաններ փոշի կը կուտակեն:

Տակաւին, ուսանողներուն կէսէն աւելին կը հաւատայ, որ ե-նամակի գրութիւնը բարելաւած է ուսուցիչ-ուսանող յարաբերութիւնները, տրուած ըլլալով, որ ուսանողները իրենց միտքերը ե-նամակով կ'արտայայտեն աւելի համարձակօրէն. բան մը, որ ըստ ուսանողներուն, դիւրին պիտի չըլլար դասարանին մէջ:

«Այսօրուան համալսարանական ուսանողները ծնած են այն տարիներուն, երբ առաջին «Փի. Սի.»-ները («Մայքրոսոֆթ»-ի տան համակարգիչը) հրապարակ իջան: Անոնք այս արհեստագիտութիւններուն հետ մեծցան եւ հիմա իրենց համար համացանցն ու ե-նամակը այնքան սովորական դարձած են, որքան՝ հեռաձայններն ու պատկերասփիւռը», ըսաւ Սթիւ ձոնզ, որ ի մի բերած է հարցախոյզին արդիւնքները:

Սակայն յատկանշականը այն է, որ ուսանողները համացանցին վրայ անցուցած ժամանակին մէջ փոքր համեմատութիւնը միայն կը տրամադրեն ակադեմիական աշխատանքներու: Անոնք յաճախ զբաղած են համացանցին երգեր արձանագրելով, բլիթային հեռաձայններու կարճ պատգամներ (էս. էմ. էս.) ուղարկելով, եւ այլն:

ԱՐԴԻԱԿԱՆ ՍԱՐՔ ՄԸ ԿԸ ՓՈՐՁԷ ԲԱՑԱՅԱՅՑՏԵԼ ԲՈՒՐԳԵՐՈՒՄ ԳԱՂՏՆԻՔԸ

Անցեալ Երեքշաբթի միլիոնաւոր մարդիկ պատկերասփիւռին դիմաց գամուած ուղղակիօրէն հետեւեցան «Փիրամիտ Ռովըր» անունով մարդամեքենային, որ ամբողջ 2 փամ «սողաց» Եգիպտոսի Մեծ բուրգին մէջ բացուած նեղ անցքէ մը ներս, յատուկ սարքով մը ծակեց յայտնուած դուռ մը եւ անկէ ներս մտցուց խողովակով մանր քամերա մը:



Գիտնականներ այս գործողութեամբ ուզեցին բացայայտել Եգիպտոսի բուրգերուն գաղտնիքը եւ գիտնալ, թէ ինչ կը գտնուի այդ դրան ետին:

Մարդամեքենային վրայ տեղադրուած քամերան բացայայտեց, թէ դուռէն անդին կը գտնուի... երկրորդ դուռ մը: Այսպիսով, շարժմանը հետեւողները անկեղծութիւնը, թէ գիտնականներ ի վերջոյ պիտի բացայայտեն բուրգերուն գաղտնիքը, յօդս ցնդեցաւ, սակայն նախաձեռնութիւնը կատարած մասնագէտները գործնականօրէն Եգիպտոսի Հնագիտութեան Բարձրագոյն Խորհուրդի ղեկավար Ջահի Հաուսսի խանդավառութեամբ մարդամեքենային «սիրագործութեան» ուղղակի սփռումէն, «ասիկա շատ կարեւոր է», բացատրեց: Խորհուրդը «Այ. Ռովըր» մարդամեքենաներու ընկերութեան եւ

«Նէշընըլ ձիոկրաֆիք»-ի գիտնականներուն եւ հնագէտներուն հետ համագործակցաբար ամբողջ տարի մը աշխատած էր 17 Սեպտեմբերի այս «կարեւոր» նախաձեռնութեան համար:

«Նէշընըլ ձիոկրաֆիք» պատկերասփիւռի կայաններէն հանդիսատեսներ ուղղակիօրէն հետեւեցան մարդամեքենային, որ շարժեցաւ բուրգէն ներս սենեակի մը մէջ հաստատուած մասնագէտներու հրահանգներուն համաձայն:

«Այ. Ռովըր»-ի ճարտարագէտները 250 հազար տոլար ծախսած էին եւ ամբողջ 6 ամիսներ աշխատած՝ պատրաստելու համար «Փիրամիտ Ռովըր» մարդամեքենան, որուն պարտականութիւն տրուած էր «նայել» դուռէն անդին: Նախապէս գերմանացի մասնագէտներու խումբ մը յաջողած էր մարդամեքենայ մը ուղղակի մինչեւ դուռը, առանց կարենալ գիտնալու, թէ ինչ կայ անկէ անդին:

Մեծ բուրգը կառուցուած է Նուֆուրի կողմէ, 4500 տարի առաջ: Ան եգիպտական բուրգերու ամէնէն մեծն ու փառահեղն է, կարճուած՝ 2,3 միլիոն քարի պլոքներէ եւ ունի 146 մեթր բարձրութիւն եւ 230 մեթր լայնք:

Բուրգին մէջ կան դէպի գնիթ տանող չորս նեղ անցքեր, որոնց ներկայութիւնը հանելուկ մը եղած է հնախոյզներու համար, աւելի քան դարէ մը ի վեր: Ըստ Հաուսսի, այդ անցքերը կառուցուած կրնան ըլլալ արտայայտելու համար Նուֆուրի կրօնական փիլիսոփայութիւնը: Արդարեւ, Նուֆուր կը հաւատար, թէ ինք արեւու աստուածն է, մինչ գինե նախորդող փարաօնները կը հաւատային, թէ միայն մահանալէ ետք է, որ իրենք պիտի դառնան արեւու աստուածներ:

Հաուսսի կարծիքով, Նուֆուրի այս համոզումն է, հաւանաբար, որ մղած է շինելու դէպի գնիթ բարձրացող այս անցքերը:

Մարդիկ չեն կրնար անցքերէն սողոսկիլ, որովհետեւ անոնք 20 սանթիմետր լայնք ունին միայն:

Գիտնականներ այժմ պիտի աշխատին նոր ծրագրերի մը վրայ՝ կարենալ բացայայտելու համար, թէ ինչ կը գտնուի երկրորդ դուռէն անդին: Մինչ այդ... բուրգերուն գաղտնիքը կը մնայ անլուծ...

«Նէշընըլ ձիոկրաֆիք»-ի գիտնականներուն եւ հնագէտներուն հետ համագործակցաբար ամբողջ տարի մը աշխատած էր 17 Սեպտեմբերի այս «կարեւոր» նախաձեռնութեան համար:

«Նէշընըլ ձիոկրաֆիք» պատկերասփիւռի կայաններէն հանդիսատեսներ ուղղակիօրէն հետեւեցան մարդամեքենային, որ շարժեցաւ բուրգէն ներս սենեակի մը մէջ հաստատուած մասնագէտներու հրահանգներուն համաձայն:

«Այ. Ռովըր»-ի ճարտարագէտները 250 հազար տոլար ծախսած էին եւ ամբողջ 6 ամիսներ աշխատած՝ պատրաստելու համար «Փիրամիտ Ռովըր» մարդամեքենան, որուն պարտականութիւն տրուած էր «նայել» դուռէն անդին: Նախապէս գերմանացի մասնագէտներու խումբ մը յաջողած էր մարդամեքենայ մը ուղղակի մինչեւ դուռը, առանց կարենալ գիտնալու, թէ ինչ կայ անկէ անդին:

Մեծ բուրգը կառուցուած է Նուֆուրի կողմէ, 4500 տարի առաջ: Ան եգիպտական բուրգերու ամէնէն մեծն ու փառահեղն է, կարճուած՝ 2,3 միլիոն քարի պլոքներէ եւ ունի 146 մեթր բարձրութիւն եւ 230 մեթր լայնք:

Բուրգին մէջ կան դէպի գնիթ տանող չորս նեղ անցքեր, որոնց ներկայութիւնը հանելուկ մը եղած է հնախոյզներու համար, աւելի քան դարէ մը ի վեր: Ըստ Հաուսսի, այդ անցքերը կառուցուած կրնան ըլլալ արտայայտելու համար Նուֆուրի կրօնական փիլիսոփայութիւնը: Արդարեւ, Նուֆուր կը հաւատար, թէ ինք արեւու աստուածն է, մինչ գինե նախորդող փարաօնները կը հաւատային, թէ միայն մահանալէ ետք է, որ իրենք պիտի դառնան արեւու աստուածներ:

Հաուսսի կարծիքով, Նուֆուրի այս համոզումն է, հաւանաբար, որ մղած է շինելու դէպի գնիթ բարձրացող այս անցքերը:


Մարդիկ չեն կրնար անցքերէն սողոսկիլ, որովհետեւ անոնք 20 սանթիմետր լայնք ունին միայն:

Գիտնականներ այժմ պիտի աշխատին նոր ծրագրերի մը վրայ՝ կարենալ բացայայտելու համար, թէ ինչ կը գտնուի երկրորդ դուռէն անդին: Մինչ այդ... բուրգերուն գաղտնիքը կը մնայ անլուծ...

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Է.ՔՍ. Տի. ԷՅ.» ԳՐՊԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻԶԸ


«Պի. Թի. Սելինք» ընկերութիւնը, որ ինքզինք վերանուանած է «Օթու», վերջերս հրապարակ իջեցուց գրպանի շքեղ համակարգչային - բլիթային հեռաձայն մը «Է.ՔՍ. Տի. Էյ.»: Սարքը օժտուած է նաեւ «Ճի. Փի. Ար. Էս.» դրութեամբ, որ համակարգիչ - բլիթային հեռաձայն կապը սերտացնող հաղորդակցութեան արդիական դրութիւն մըն է:



Սարքը կրնայ գործել «Մաքրոսոֆթ Փոքթ ֓ Սի. 2002»-ի բլիթային հեռաձայններու յատուկ ծրագրերին միջոցով:

«ԼՐՏԵՍՈՂ» ԹՈՒՆԱԳՐԱՅԻՆ ՔԱՄԵՐԱ

Հեռադիտակ մը ունեցող «Տի. Գի. 100» անունով թուագրային լուսանկարչական մեքենան օժտուած է 7 x «գլոմ»-ի դրութեամբ, ինչպէս նաեւ՝ նկարներու 850 հազար փիքսել ծաւալով: Ան կրնայ 16 մեկապայթ մամբարումի իր դրութեան մէջ 100 լուսանկար պահել:



Շնորհիւ այս քամերային՝ կարելի է երկվայրկեանի մէջ 5 նկար նկարել:

«ԷՐԻՔՍԸ» ԿՐՆԱՅ ՎԵՐՋ ԴՆԵԼ «ՍՈՆԻ»-Ի ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ

«Էրիքսըն» ընկերութիւնը վերջերս յայտարարեց, որ իր յաջողութեամբ մը ետեւեւեակներուն «Սոնի» - «Էրիքսըն» համագործակցութեամբ կառուցուած բլիթային հեռաձայններու շուկան գոհացուցիչ արդիւնքներ չտայ, ան վերջ մը պիտի դնէ արտադրութեան միացեալ այս կառույցին:

«Պատգամը յստակ է. նոյն սխալը պիտի չկրկնենք, դրամագլուխ պիտի չներդրենք միացեալ գործունեութեան մը մէջ, որ արդիւնաւէտ չէ», ըսաւ «Էրիքսըն»-ի բանբերը:

Նշենք, որ «Էրիքսըն - Սոնի» այժմ հրապարակի վրայ ունի «Փի. 68. Այ.» բլիթային հեռաձայնը:

Այս ամիս ան հրապարակ պիտի իջեցնէ «P 800» հեռաձայնը, որ օժտուած է քամերայով: Ըստ մասնագէտներուն, «Էրիքսըն - Սոնի» պէտք է արտադրէ աւելի մատչելի գիներով սարքեր, որպէսզի կարենալ եկամուտ ապահովել: Այս գծով աշխատանքներ կը տարուին, եւ շուտով ընկերութիւնը հրապարակ պիտի իջեցնէ «Փի. 300»-ը:

«Էրիքսըն - Սոնի» անցեալ եռամսեակին 5,3 միլիոն բլիթային հեռաձայններ վաճառած է, մինչ տարի մը առաջ նշեալ երկու ընկերութիւնները առանձինքար վաճառած էին ասիկէ 43 առ հարիւր աւելի: «Էրիքսըն» եւ «Սոնի» 250ական միլիոն տոլար ներդրած են իրենց միացեալ աշխատանքներուն համար:

ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՒ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԿԱՅՔ ՄԸ

Ելեկտրոնային քարտեր (ի - քարտ) ուղարկելու սովորութիւնը հետզհետէ կը փոխարինէ թուով եւ խաւաքարտէ պատրաստուած բացիկները եւ շնորհաւորական նամակները, շնորհէ այս դրութեան մատչելիութեան եւ արագութեան:


Ելեկտրոնային քարտերու առաջին յատկացուած կայքերէն ոմանք վերջին ամիսներուն, չգիտնալով նիւթական դժուարութիւններու, ձրի ծառայութեան դրութիւնը դադարեցուցած են եւ որդեգրած՝ վճարովի առաջին անգամ: Սակայն տակաւին կան մեծ թիւով կայքեր, որոնք ձրիօրէն կը մատուցեն այս ծառայութիւնը: Նշեալ կայքերուն շարքին ուշագրաւ է www.flowgo.com, որ յուզիչէն մինչեւ ծիծաղաշարժ բնոյթի հարեւրաւոր քարտեր կ'ընդգրկէ, դասաւորուած՝ ըստ նիւթի: Քարտերուն մեծ մասը պատրաստուած է շարժուն գծանկարներու դրութեամբ եւ երաժշտութեամբ:

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«Բարի եկած էք միհարձալու ցուցմունքներ տուող մեր կայքը, մէկ քիւլո կորսնցնելու համար համակարգչային «մուկ»-իմ վրայ «ըլիք» ըրէք 6 միլիոն անգամ...»



«Շիւնակի եւկի մը համոզիպեցայ համացանցի վրայ գոյոյի ընթացքին, բայց ի յայտ եկաւ, որ ան կատու մըն է...»

www.hamazkayin.com

Մանկապատանեկան

ՀԱՐՑԱՐԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐՈՒՆԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) 1718

Նշանաւոր արկածախնդիր մըն է: Հրաւիրուած է յատուկ տոնակատարութեան մը՝ Միացեալ Նահանգներու փառաբանումը: Կը նշմարես, թէ անոնք տարօրինակ բան մը կը թափեն պատանիներուն գլխուն վրայ: Ի՞նչ է այդ նիւթը:

- Ա - Բեղմնափոշի:
- Բ - Քաթիլուի փուշեր:
- Գ - Շոճի խէփ:

2) 1773 Թ.

Շուէտացի մասնագէտ Քարլ Վոն Լիննէի մօտ ճաշելէ ետք կը պատիս անոր պարտէզին մէջ: Ի՞նչ կը նկատես, երբ կարգ մը ծաղիկներ կ'ուտումնասիրես:

- Ա - Ժամանակը:
- Բ - Յաջող օրուան եղանակը:
- Գ - Գետինն թթուութիւնը:

3) 1816 Թ.

Ինտոնեզիոյ արշիպելագոսին մէջ, Սումատրայէն Սիպուրու կղզին անցնելու համար նաև մը փնտռելու ընթացքին կը նկատես, որ բնիկները Սիպուրու կղզին կ'անուանեն «Մարիկա-Մարիկա կղզին»: Ինչո՞ւ անոնք այս անունը կոչուան այդ վայրին:

- Ա - Որովհետեւ անոր բնակիչները ծաղիկներով կը զարդարուին:
- Բ - Որովհետեւ անոր վրայ մարդիկ չեն ապրիր, սակայն կղզին ծաղիկներով ծածկուած է:
- Գ - Որովհետեւ հոն ապրող մարդիկը ծաղիկներով կը սնանին:

4) 1849 Թ.

Քանադայի Հիւսիս-արեւմուտքը, Պաֆին



կղզիին վրայ, ցուրտը կրնայ մահացու ըլլալ: Ինուրիս մամանները ի՞նչ կ'ընեն իրենց նորածինները ցուրտէն պաշտպանելու համար:

- Ա - Անոնք մանուկներուն մարմինը կը ծեփեն փոկի ճարպով:
- Բ - Անոնք նորածինները իրենց տարատներուն մէջ կը դնեն:
- Գ - Անոնք քիչ մը ոգելից ըմպելի ծծել կուտան նորածիններուն:

5) 1876 Թ.

Շոգեկառքով երկար ճամբորդութենէ մը ետք կ'որոշես թոքիդի կայարանին մէջ բան մը ուտել: Սուշիի տուփ մը կը դնես եւ տուփին տակը բան մը կը նշմարես: Ի՞նչ կը գտնուի հոն:

- Ա - Պամպուկի տերեւ մը:
- Բ - Քանդակուած ատամնակրկիտ մը:
- Գ - Նուսուֆար մը:

6) 1948 Թ.

Քենդէրօ շրջանը ապրող ուտու ազգականիդ այցելելու համար դուն աւանդակաւ նաւակով կը ճամբորդես: Կը նշմարես, թէ թիակներուն ծայրերը կերպասով փաթթուած են: Ինչո՞ւ:

- Ա - Ձայն չհանելու համար:
- Բ - Լասդիները չվիրաւորելու համար:
- Գ - Որպէսզի ձուկները թիակները չկրծեն:

7) 1958 Թ.

Հարաւային Ամերիկայի մէջ ջուր արկածախնդրութիւնը վերջ կը գտնէ: Հիմա, որ հնդիկները քեզ աւելի լաւ կը ճանչնան, անոնք կը համարձակին քեզի ըսելու, թէ ի՞նչ կը մտածեն սպիտակամորթներու մասին: Այս ձեռով, դուն կ'իմանաս, թէ սպիտակամորթները կը նմանցուին կապիկներու: Ինչո՞ւ:

- Ա - Որովհետեւ անոնք իրենց բնական պէտքերը կը հոգան որեւէ մէկ ժամուն:
- Բ - Անոնք ջրային են՝ պոռուցուցող կապիկներուն նման:
- Գ - Նոյն անյագութեամբ կ'ուտեն:

8) 1974 Թ.

Վատիկան այցելութեան ժամանակ պապին խոհարարը քեզի կը պատմէ, թէ Վատիկանը երկար ժամանակ արգիլած էր ձիու միս ուտելը: Ի՞նչ է անոր պատճառը:

- Ա - Ձին մեռնողներուն ոգին դրախտ կը փոխադրէ: Բ - Յայտնութեան չորս ձիաւորներուն պատճառով:
- Գ - Ձին մարդուն ամէնէն լաւ բարեկամն է, հետեւաբար անոր միսը չեն ուտեր:

9) 1980 Թ.

